

ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱՃԵԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Հողին մէջ կոմիտասի սուրբ պատուիրանները, դարկերակին մէջ՝ իր ժողովուրդի սրտին թրթրանքը, ճակատագիրը՝ բնաւեր հայու, իսկ դործը՝ աւերուած տաճարի ցիրուցան եղած նշխարները դէթ հաւաքել... Ու հաւաքեց, գրի առաւ ան, մամիկներու եւ պապիկներու թռչնած շուրթերէն, սըրտերու մէջ անմուրաղ մնացած կեանքի երգերը:

Անձնուէր, հմուտ, համբերատար դործի արդիւնքն են 1200 երգեր, առածներ, զրոյցներ, հէքեաթներ, օրհներգներ, անէծքներ - բանասիրական սքանչելի նմոյշներ, լրացնող եւ նոր լոյս սփռող հայ ազգային երաժշտական-բանասիրական դիտութեան վրայ: Ու այսպէս, ըստ էութեան իր ողջ կեանքը 10 մեծածաւալ տետրերու մէջ նօթադրած Միկրան Թումանեան կոմիտասեան սանը, եօթանասուն եւ չորս տարի օտար ափերու վրայ ապրած, տարբեր ուղիներով կիւրիսէն Ամերիկա հասած, 1964 թուականի աշունը եկաւ Հայաստան: Ան Հայաստան բերաւ իր հոգեւոր կեանքը: Հայրենիքին վստահեցաւ ու անոր կտակեց ամենաթանկագինը...:

Միհրան Թումանեանը ծնուել է 1890 թուականին, Սերաստիոյ նահանգի կիւրիս քաղաքը, 1895-ի կոտորածներու հետեւանքով, մանուկն իր բնաւեր ընտանիքին հետ փախեր է Սերաստիա քաղաքը: Այստեղ ան կը ստանայ նախնական ու միջնակարգ կրթութիւնը: 1910ին հնարաւորութիւն կը ստանայ երթալու Պոլիս՝ նպատակ ունենալով իրաւարանական բարձրագոյն ուսում ստանալ: Բայց կարծես նախախնամութիւնը Թումանեանի համար ալ անակնկալ էր պատրաստեր: Պոլսոյ մէջ ան կը ծանօթանայ հանճարեղ կոմիտասին, որ ազգային երաժշտութեան ուսումնասիրութեան եւ անոր տարածման նուիրական գործին զօրադրուելու արժանի սաներ կ'ուղէր համախմբել իր շուրջը: Ու ահա Միհրան Թումանեանը կը դառնայ կոմիտասեան հինգ սաներէն մէկը, մեծ ուսուցչին առաւելագոյն ժառանգելով երաժիշտ-բանահաւաքի մասնագիտութիւնը, այն՝ ինչ աւելի մօտ էր անոր հողին ու տարերքին:

Մեծ Եղեռնը կը տանի ուսուցիչը եւ սաները վերստին, բնաւեր հաւքերու նման կ'երթան տարբեր ճամբաներով: Բայց ամէն ուր անոնք իրենց սըրտերուն մէջ կը տանին մեծ ուսուցչի պատուիրանները:

Զինուորադրութիւն, փախուստ ու ժամանակաւոր հանդրուան Եգիպտոս, այսպէս կը դասաւորուի Թումանեանի կեանքը: Ալեքսանդրիայի մէջ ան երգչախումբ կը կազմակերպէ եւ կը հնչեցնէ կոմիտասեան երգերը: Երգերը կը մնան կիսահունչ, Թումանեանը մղելով դեղերումներու նոր ճամբաներ, Հալէպ, Ատանա, վերստի Պոլիս: Նորէն կը հանդիպին սաները, թէեւ ստանց ուսուցչին, կը կազմակերպին համերգներ, կը ներկայացնեն Վ. Սարգիսեանի երաժշտաւորած «Անուշ»ը, ամբողջ հսոյթը ներդնելով կոմիտասի ապաքինման հանդանակութեան մէջ:

1920ը Թումանեանը կը տեղափոխէ Փարիզ: Ճակատագիրն առժամանակ այստեղ էր նեաեր նաեւ Բարսեղ Կանաչեանը: Եւ կոմիտասեան երկու սաները կենսունակ օգիի դորութեամբ, յաղթահարելով շատ խոչընդոտներ, կը լրացնեն իրենց երաժշտական կրթութեան թերին ու ազգային երաժշտական համերգներ կը կազմակերպեն:

Հայրենական ուստաններէն բնադերձ եղած, հողմահալած հայ ժողովուրդի բեկորներու հետ, 1923 թուականին, Ամերիկա կ'երթայ նաեւ Միհրան

Թուժածեանը, յուսայով այնտեղ ապաստան դոնել: Անխոնջ կամիասացին, այտեղ քառասունէն աւելի տարիներ դրի կ'առնէ ու կը հաւաքէ հայ ժողովրդական երգերն ու բանահիւսութեան նմոյշները, միաժամանակ նօթագրելով երգերուն եղանակները:

Թուժածեանը երկար-երկար շրջադայեր է Ամերիկայի բաղմաթիւ հայրենակ վայրերը, մտեր հարիւրաւոր հայ ընտանիքներու տուները, ի դորձ դնելով իր բովանդակ կորովը, հմտութիւնն ու համբերութիւնը՝ խօսեցնելու, երգեցնելու համար մամիկներն ու պապիկները, անոնց հոգիի ու յիշողութեան խոր ծալքերէն դուրս կորզելու համար վաղ պատանեկութեան ու երկտասարդութեան շրջանի երգերը, սրոնք հնչուեր էին հինաւուրց պապիկական ուստանին մէջ: Թուժածեան կ'աճասպարէր թուղթին յանձնել իր ժողովուրդի կենսաթրթիւ ոգիին արտայայտութիւնները, փրկել քէթ պատասխիկները այդ հոգեւոր պանծերուն, որովհետեւ դիտէր, թէ այդ սերունդին հետ պիտի անհետանային նաեւ հոգիի այդ թանկագին հունտերը, բողբոջելու համար հող չգտնելով օտար երկնակամարի տակ:

Այս միջոցով, Թուժածեանը հաւաքեր է Վասպուրահանի, Կիւրինի, Ակնի, Իթիլիսի, Էրզրումի, Տիգրանակերտի, Խարբերդի, Երզնկայի, Սեբաստիայի, Բութանիայի, Սվեախայի, Եդեսիայի, Հաճընի, Կեսարիայի, Պոլսի եւ այլ վայրերու բանահիւսութեան ու երաժշտութեան նմոյշները:

Այս երգերը դասակարգուած են ըստ ժանրերու՝ ծիսական երգեր, ուր կը մտնեն հարսանեկան, օրօրոցային, սուգի երգեր, աշխատանքային երգեր, պարերդներ, կենցաղային, պանդխտութեան, երգիծական, մանկական եւ մեծ չափով մը աղբային-հայրենասիրական երգեր: Ի դէպ, Թուժածեանն իր դորձուհեւթեան ընթացքին, նախ կը գրանցէր ժողովուրդին մէջ երգուող՝ աղբային երանդներով նիւթերը, ապա միայն կը հաւաքէր բուն ժողովրդական երգերը:

Այսպէսով, ան կազմեր է ամբողջական ժողովածու մը, որ կ'ընդգրկէ աղբային-հայրենասիրական երգերու հազարէն աւելի նմոյշներ, որոնք արդիւնքն են հայ քաղաքային երգարուեստին: Թուժածեանի՝ իր առաքելութեան մէջ բացառիկ դիտականութիւնը արտայայտուած է այն բանի մէջ, որ ան շատ լուրջ ու զրոյշ դրի առեր է միւլենոյն երգի տարրերակները, սրոնք հետաքրքրական են ու արժէքաւոր եւ մեծ չափով ամբողջական ու լիակատար կը դարձնեն ո՛չ միայն գրառուող նիւթը, այլեւ անոր հոգեկան, դեղադիտական, մշակութային արժատները:

Բանասիրութեան համար բացառիկ արժէք կը ներկայացնեն Թուժածեանի հաւաքած «Ակնայ հաւասիներն ու պապիկները», որոնք նոր լոյս կը սփռեն բանասիրութեան մէջ արժարժուած միջնադարեան գուսանական երգերու՝ հայրեններու եւ անտունիներու, ծագման ու տարածման հարցին վրայ: Բանահաւաք երաժշտադէտը հաւաքեր է նաեւ թուրքերէն լեզուով կատարուած հայ ժողովրդական երգերը, որովհետեւ ան մեծ արժէք կը ներկայացնէ տարբեր միջավայրերու մէջ ժողովրդական երգերու բնոյթն ու տարածումն ու սուսանասիրելու դորձին մէջ:

Թուժածեանի բանասիրական մեծածաւալ աշխատութեան առանձին նրմոյշներու հետ ծանօթութիւնն իսկ ցոյց տուաւ, թէ ան ոչ այլ ինչ է, եթէ ոչ մասնադէտի կողմէն խստորէն ընտրուած բնասոճմիկ, լիովին հարադատ եղանակներ: Որ այդ երգերը երաժշտական կենցաղի սովորական արտայայտութիւններ չեն, այլ դիտականօրէն ու դեղարուեստականօրէն յղիւած ու

կոկուած ժողովրդական ստեղծագործութիւններ, յատկանիշ մը՝ որ իրաւի, Թումաճեանը կը հարադատեցնէ իր հանճարեղ ուսուցչին, կը հաստատէ ժողովրդական ստեղծագործութեան դնահատման կոմիտասեան սիզբունքը: Իսկ այդ սիզբունքը կը հաստատէ, թէ ժողովուրդի շուրթերէն արտաբերուած սոմէն երգ, ինչը որ կրնայ ենթարկուած ըլլալ ժամանակի ամենազօր ազդեցութեան, կատարողի ճաշակին ու կարողութիւնների անհատականութեանը, գեռեռ ժողովրդական չէ, այսինքն՝ հետո է ազգայինի բարձր դեղագիտական շափանիչներէն, չի կրնար ներկայացնել ժողովուրդի մը կեանքին ու կենցաղին, հոգեկան ու բարոյական աշխարհի համայնապատկերը:

Թումաճեանի հաւաքածուն բանահիւսական, երաժշտական, լեզուարարառային տեսակէտէն լիարժէք ու կատարեալ բնադրերու հաւաքածոյ է, որ նաեւ այդ աշխատութեան կը հաղորդէ գիտական-գեղարուեստական խոչոր արժէք: Աշխատութիւնը կրկնակի կ'արժէքաւորուի, քանի որ ան կ'արձանագրէ մեր ազգային այն հատուածներու հոգեւոր հարստութիւնները, շրջաններու՝ որոնցմէ մեզ շատ քիչ նիւթեր են յայտնի:

Թումաճեանը ոչ թէ մասնադիտութեամբ, այլ կրչումով երաժշտագէտ բանահաւաք է, ան բանահաւաք է ողջ էութեամբ: Ան դրի կ'առնէ ժողովրդական բանահիւսութեան իւրաքանչիւր արժէքաւոր նմոյշ, որտեղ որ ան իր ականջին կը հասնի: Ատոր համար ալ պատահական չէր, որ Թումաճեանը Երեւան հասաւ, ճանապարհին՝ ինքնաթիռի մէջ, իր ժողովածուն հարստացուցած քանի մը նոր երգերով: Այո՛, երբ ան 1964ի աշնան Նիւ Եորքի մէջ նստաւ ինքնաթիւր, Մոսկուա դարձաւ համար, իրեն հանդիպեցան հայրենակիցներ, ան այդտեղ կը խօսեցնէ, երգել կու տայ քանի մը տարեց ազգակիցներու, լսածը դրի կ'ստնէ: Թումաճեանը ձայնագրեց քանի մը երգ նաեւ այստեղ՝ Հայաստանի մէջ:

Կոմիտասի աւանդներով կեանք մտած Միհրան Թումաճեանը իր կենսագրականին մէջ կը գրէ. — «... Արտաքին եւ ներքին սրբադասներու հեղձուցիչ մթնոլորտին մէջ փոշիանալու վտանգէն սահմակած փախած եմ այս երկրի հեռաւոր մէկ անկիւնը, եւ տարիներէ ի վեր կ'որոնամ տեսիլքներու աշխարհին մէջ՝ հայ տաղերու, տաղարաններու, ժողովրդական երգերու ու խաղերու ծովածաւալ ուկրանոսին մէջ կը ջանամ թիալարել, երբեմն տիրութեամբ, երբեմն հրճուանքով, բայց միշտ այն յոյսով, որ այս ալեկոծեալ ծովն ալ օր մը պիտի հանդարտի... ու մեր նաւակը՝ «մերը եւ ձերը» մի եւ անբաժան ու անվախճան՝ պիտի հասնի մեր հայրենի նաւահանդիստը»:

Հայրենիքի մէջ եղած կարճ օրերու ընթացքին Թումաճեանը երաժիշտներու եւ բանահաւաքներու շրջանակի մէջ ծանօթացուց իր երկարամեայ աշխատանքը, որ շատ բարձր գնահատուեցաւ արուեստակիցներու կողմէն: Թումաճեանը երեկոյ մըն ալ նուիրեց կոմիտասեան մէկ ուրիշ սանի՝ Բարսեղ Կանաչեանի ստեղծագործութեանը հայրենակիցներուն ծանօթացնելու համար: Ան մասնաւորաբար կանգ առաւ Կանաչեանի «Արեղայ» երեք պատկերէ բաղկացած մէկ արարով օրերայի վրայ, գրուած Շանթի «Հիմ Աստուածներ» սիմֆոնի: Այսպիսի երեկոյթ մը ցոյց կու տայ նաեւ կոմիտասեան սաներու ազգանուէր գործին ընդհանրութիւնը, ընկերային վարքի առաքինութիւնը, նուիրական աւանդներով միաւորուածութիւնը, որ շատ յուզիչ է ու մեծազէս գնահատելի: Եթէ նկատի առնենք նաեւ այն ջերմութիւնը, որով Թումաճեանը կը խօսի միւս սաներու մասին, եւ այն՝ որ անոնք որոնք դեռ

կենդանի են, սերտորէն կատուած են իրարու հետ եւ քաջատեղիակ մէկը մի-
սի զործուենէութեան, ապա աւելի եւս կը վաստուի մեր վերը ըսուածը:

Թուճամանն — երաժշտադէտի դիմանկարը թերեւս աւելի կ'ամբողջու-
նայ, եթէ մէջ բերենք նաեւ անոր քանի մը խոհերն ու մտքերը, որոնք արտա-
յայտեր է «Հայրենաբաղձ հնչիւններ»ու առաջին հատորի հրատարակութեան
առթիւ: Թուճամանը կը դրէ. «Եթէ երգը — որեւէ ժողովուրդի երգ, — խա-
ցումն ու ցոլացումն է այդ ժողովուրդին ամբողջական էութեան, — այդ պա-
րագային՝ հայ երգն ալ, նախ եւ առաջ, պարունակելու է հայ հոգիին որեւէ
մէկ արտայայտութիւնը: Արդ, լսի հայ ծնած ըլլայն ու քիչ մըն ալ նոթա
դիւանալը բաւական չէ հայ երաժիշտ կոչուելու: Հայ երաժիշտը պէտք է իր
ժողովուրդին էութենէն բխող անբացատրելի շունչով հաղորդուի, որպէսզի
վերսով կամ աւանդաբար, իրրեւ սնկորնչելի վանձ ու անփախարիներէ ժա-
ռանդ՝ իրեն տրուած այդ հոգեկան շունչը պայծառօրէն կարենայ արտացո-
լացնել իր մշակած կամ հեղինակած երգերուն մէջ:

«Մեզի համար խնդիր չէ, թէ հայ երգահանը երաժշտական ինչ միջոց-
ներու կը դիմէ այս շոշափելի շունչը տալու համար իր որեւէ մէկ դործի:
Նոյնիսկ ներող աչքով կ'ուզենք նայիլ բոլոր անոնց, որոնք եւրոպական քե-
րականներու հետեւողութեամբ կամ զարափերջիկ խայտարդէա նսրաձեւու-
թեամբ իրենց դործերը կը զարդարին, — երբեմն գիտնալով, յաճախ չգիտնա-
լով, — օտարամուտ ու խորթ պաճուճանքներով:

«Մեզի համար միակ հարցը այն է, թէ այս բոլոր արտաքին յարգա-
բանքները մեկդի նետելէ վերջ, հայ երաժշտին մատուցած երգին մէջ պիտի
կրնանք դանել հայու քայուածքը, նայուածքը, ծիծաղն ու լացը: Մեր կուրծ-
քին տակ պիտի դաճո՞նք հայրենի տան սանդուխներէն վեր բարձրացող ու տա-
րածուող հնչիւններուն քաղցրութիւնը:

«Գիտենք արդէն թէ այս շունչով ներշնչուած արուեստադէտ երգահան-
ներու շարք մը ունինք թէ հայրենի աստղերուն եւ թէ արտասահմանի սա-
տճոյն երկինքներուն տակ, պատրաստ՝ հայ երաժշտութեան մշտալաւ բա-
ղինին շուրջ բոլորուելու, եւ այսպիսի ժողովածուներու յաջորդական հրա-
տարակութիւններու առթիւ բերելու իրենց սրտարուխ աջակցութիւնն ու բա-
ժինը: ... Ժողովածուն կը գովենք իրրեւ նախափորձ, կ'ընդունինք, մանա-
ւանդ, իրրեւ աղբարտը նշան՝ ի մի հաւաքելու, որովհետեւ սրտանց կը ցան-
կանք հաւատալ թէ հասած է ժամանակը, որ աջ ձեռքը դիտնայ ձախ ձեռքին
ուր ըլլալը: Փորձառութեամբ դիտենք արդէն, թէ երկու ձոռքով շատ ու շատ
բաներ կարելի է «դանել ու հաւաքել»: Այլ մանուանդ, շատ ու շատ բաներ
փրկել ու պահպանել»:

Արեւան, 1959 «Սփիւռփախայ Երաժիշտներ»

Յ. ԲՐՈՒՏԵԱՆ